Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 02

**«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ 20.06.2016թ.-ի N 72 - Լ հրամանով կազմավորված գնահատող հանձնաժողովի նիստի**

ք.Երևան 25.07.2016թ. ժամը 12⁰⁰

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ 20.06.2016թ.-ի N 72 - Լ հրամանի հիման վրա մասնաճյուղերի տանիքների փայտե կոնստրուկցիաների հրապաշտպան նյութով տոգորման աշխատանքների պարզեցված ընթացակարգով ձեռքբերում, ծածկագիր՝ <<ԲԷՑ-ՊԸԱՇՁԲ-16/31>>

Մասնակցում էին հանձնաժողովի՝

Նախագահ

Կորյուն Մկրտչյան - Գլխավոր տնօրենի տեղակալ

Անդամներ

Լևոն Ադամյան - Գլխավոր ճարտարագետի տեղակալ

Լևոն Զավաղյան - Գլխավոր տնօրենի խորհրդական

Վահե Մարտիրոսյան - Ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ

Միշա Բաղրամյան - Իրավապայմանագրային բաժնի պետ

Յուրի Հովհաննիսյան - ԱԱԱ և Հ ծառայության պետ

Քարտուղար՝

Ռոմեո Ալբերտյան - գնումների համակարգող

**I. Հայտերի բացման մասին**

---------------------------------------------------------------------

(Կ. Մկրտչյան)

1. Գնահատող հանձնաժողովը արձանագրեց.

ա) սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

- «Ալֆա թրեյդ» ՍՊԸ-ն ՝ 25.07.2016թ, ժամը 10:55-ին, իրավաբանական հասցե՝ Կոտայքի մ., գ. Զրվեժ, 2-րդ փողոց 28ա., հեռ. 091 53 95 42
- «Երևանի հրշեջ անվտանգություն» ՍՊԸ-ն 25.07.2016թ., ժամը 11:15-ին, իրավաբանական հասցե՝ ք. Երևան Գր. Լուսավորիչ 12/55, հեռ. 091 42 14 01
- «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն 25.07.2016թ., ժամը 11:30-ին , իրավաբանական հասցե՝ Լոռի մարզ, ք. Ստեփանավան , Չարենցի 175, հեռ.099 12 28 12
- «Քիմպաշտպանության ՕՍՄԻՍԿ » ՍՊԸ-ն 25.07.2016թ., ժամը 11:40-ին , իրավաբանական հասցե՝ ք. Երևան, Եղվարդի խճուղի 111 , հեռ.010 37 01 09

2. Մասնակիցների ծրարներում առկա են իրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

2.1 «Երևանի հրշեջ անվտանգություն» ՍՊԸ-ի ներկայացրած հայտի Հավելված 4-ում գնային առաջարկում, ընդհանուր գումարը տառերով արտահայտված չէ, իսկ Հավելված 9-ին կից վճարման պահանջագրի 12-րդ տողում վճարման ենթակա գումարը և 13-րդ տողում արժույթը լրացված չեն, ինչպես նաև մասնակիցը ստորագրել և կնքել է վճարող բանկի փոխարեն:

2.2 Մասնակիցների գնային առաջարկներն են .

| Հ/Հ | Կազմակերպության անվանումը | Գնային առաջարկ /առանց ԱՀՀ/ ՀՀ դրամ |
|---|---|---|
| 1 | «Ալֆա թրեյդ» ՍՊԸ | 9 950 000 |
| 2 | «Երևանի հրշեջ անվտանգություն» ՍՊԸ | 10 949 920 |
| 3 | «Վահրադյան Շին» ՍՊԸ | 5 833 050 |
| 4 | «Քիմպաշտպանության ՕՍՄԻՍԿ » ՍՊԸ | 7 666 667 |

3.

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

3.1 Ընթացակարգի հրավերով սահմանված ծրարների կազմման և ներկայացման պահանջներին համապատասխանում են մասնակիցների կողմից ներկայացրած հայտերի ծրարները:

3.2 Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 10.02.2011թ. N168-Ն որոշմամբ հաստատված հաստատված կարգի 45-րդ հոդվածով «Երևանի հրշեջ անվտանգություն» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը գնահատել անբավարար և մերժել:

3.3 Մնացած մասնակիցների կողմից հայտերով ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին:

3.2 Մնացած մասնակիցների գնային առաջարկների հաշվարկները ճիշտ են:

3.3 Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներ. ՀՀ դրամ

| 1-ին տեղ | Առաջարկած գին | 2-րդ տեղ | Առաջարկած գին | 3-րդ տեղ | Առաջարկած գին |
|---|---|---|---|---|---|
| «Վահրադյան Շին» ՍՊԸ | 5 833 050 | «Քիմպաշտպանության ՕՍՄԻՍԿ » ՍՊԸ | 7 666 667 | «Ալֆա թրեյդ» ՍՊԸ | 9 950 000 |

3.4 Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող սույն հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

3.5 Ծանուցել «Վահրադյան Շին» ՍՊԸ-ին առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում չհիմնավորված ցածր գնային առաջարկի վերաբերյալ ներկայացնել լրացուցիչ հիմնավորում: Ընդ որում, գնային առաջարկը համարվում է չհիմնավորված ցածր, եթե այն ցածր է տվյալ գնման հայտով նախատեսված առավելագույն գնի 75 տոկոսից:

3.6Հարցում ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 2.3 կետի «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշներին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

3.7 Հաջորդ նիստը գումարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից եզրակացությունը ստանալու օրվա հաջորդ աշխատանքային օրվա ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում` կողմ` 6, դեմ` 0:

Կորյուն Մկրտչյան

Լևոն Ադամյան

Լևոն Ջավադյան

Ռոմեն Ալբերտյան

Վահե Մարտիրոսյան

Միշա Բաղրամյան

Յուրի Հովհաննիսյան